

ԱՐԴԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

Հատը 3 մեծադիր խաչիկի մէջ

ԿԵՆՏՐԱԼ ԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՒ ԶԱՐԳԱՐՈՒՄ

Դուրսերը 4 մեծադիր Հատը

Յ. Գ. ՍԱՐԳՍԻԱՆ

Համարատու — Տնօրէն

Տ Ա Ր Ե Դ Ի Ն Կ Ա Ն Խ Ի Կ

ԻԶՄԻՐ . . . Օսմ. ոսկի 1
ԴՈՒՐՈՐ . . . Մէճիօյէ 6
ՕՏԱՐ ԵՐԿԻՐ . . . Պարսկ. 23

Ե Ա Ն Ո Ւ Տ Ա Դ Ի Ն

5 զրուշ տողը ՄԵԿ ԱՆԳԱՍՏ
2 զրուշ . . . ԵՐԿԻՐ ԱՆԳԱՍՏ
60 վարա . . . ԵՐԿԻՐ ԱՆԳԱՍՏ

Վ. Գ. ՊԱՆՈՒՅԵԱՆ

Հիմնադիր

Ա. Կ. ԱՂԱՋԱՐԵԱՆ, կրտսերին բաժանորդագրութեան եւ ֆանուցման վե-
րաբերելու բոլոր գործերը: Շինչեմիւր ֆանուցման Ձեռնարկներ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը դրուի: Ընդիմ խանութիւ 17

ԻԶՄԻՐ, ԶԱՐԿԱՐՈՒՄ 9/21 ՄԱՅԻՍ, 1884

ԱՌ ԸՆԹԵՐՈՒՄ

Կառավարութեան հրամանաւ
քառասուն օրի չափ դադարելէ
ետեւ, այսօր վերադարձին
Երեւան, դարձեալ կառավա-
րութեան հրամանաւ:

Հարկ չենք դրար մեր գա-
ղարման պատճառն ընթերցո-
ղաց բացատրելու, քանի որ կա-
ռավարութեան ալ իւր կողմէ
հարկ չըզգաց զանոնք պաշտօ-
նապէս, այսինքն գրաւորապէս
հաղորդել մեզի, անուշտ իւր
սովորական բարեօրոշմամբ
չուկելով երկարել մեր գաղա-
րութիւն:

Այս մասին մեր ընթերցողները
տեսակ տեսակ ենթադրութիւն-
ներ քրտն են հարկաւ, թող
արեւմտեան ամեն ոք իր ենթադրու-
թեան տրամադատութիւնը չը
վերադարձու համար՝ հաւանա-
կան համարի գայն եւ հաւատար-
մայ, որ քնդհուպ յաւելուած-
ներով պիտի լրացունենք այն
տանկերկա թիւերը՝ զորո չկը-
ցանք հրատարակել քառասուն-
եայ դադարմամբ:

Շատ բարեկամներ ալ, որոց
մէջ միտ ներքեւ եւ խօսք չհա-
կնալու պաշտօն ունեցողներ ալ
կը գտնուին, վտարք յայտնա-
ծեն սոցաւորարար որ Աշխարհ
բոլորովին խափանումն իրողու-
թիւն մ'ըլլար, եւ անշուշտ ի-
րենց խղճահարութիւնն է որ
այդ ազնիւ մտածումներն յղա-
նալ կուտայ իրենց, քանի որ
ի մեն, ի բնէ, ի սովորութեան
միջնապէս ի պաշտօնէն եւ ի կող-
մանէ պարտաւորութիւնն ունին
հարկել չարք, բանաւորութիւն-
ներն եւ անբարոյականութիւնն ու-
րոյ վրայ միշտ կը խօսին այդ
մարդերը, կարծես հաստատու-
թիւն տալու համար Անգլիայի
բանաստեղծին այն խօսքին՝ թէ
«Միայն անբարոյականներն են
որ միշտ բարոյականութեան վրայ
կը ճառեն»:

Խօսք մ'եւս:

Այդ բարեօրոշիչ բարի կամայ
հակառակ թիւն մեր իրապա-
տախանումն իրողութիւն մը չը-
ղաւ, իրողութիւն մ'է սակայն
որ մեր վերադարձն հրատարակման
արտօնութիւնն անցեալ չարթու-
տրուեցաւ, բայց հրատարակու-
թեան օրերը չլիովելու համար
ստիպուեցանք այսօր երեւիլ:

Մեր գաղարկմէն, այսինքն
անցեալ Ապրիլ ամսոյ սկիզբէն
ի վեր, գրեթէ միամտայ շըլա-
նի մը մէջ, թէ՛ աղբային եւ թէ՛
համազգային նշանակութեան տը-
ժանի դէպքեր անցան: Այդ
դիպաց գոնէ գլխաւորներուն
համառօտիւ յիշատակելն ու ար-
ձանագրելը պարտաւորութիւն մը
է ամեն լրագրի համար, վասն-
զի, ինչպէս ամեն մարդ կարող
է բնական, իրագրին հաւարա-

կաց կարծիքը, ժողովրդեան հը-
րահանգիքը, վարչութիւններու
գէպի ուղղութիւն յուշարարը եւ
այլն, եւ այլն ըլլալէ եւ այլ կեր-
պով հանրային օգտին ծառա-
յելէ զտու, նաեւ կը ծառայէ
ուրիշ կարեւոր բանի մ'ալ, այ-
սինքն պատմութեան՝ որ յա-
ջորդ սերունդին ուսումնարանն է
գրեթէ: Հետեւաբար մեր մեր-
ձակայ թիւերէն միոյն մէջ ըստ
կարի համառօտ, այլ ոչ անօ-
գուտ կերպով պիտի ամփոփենք
այդ դէպքերը:

Ինչպէս ընթերցողք կը լինին, ար-
դէն նախորդ թիւով յօդուած մը
հրատարակած էինք ԱԶԳԱՅԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՆ վերնագրով: Ներկայ, որ
նոյնին շարունակութիւնն է եւ որ
մեր գաղարկման հրամանը մեզ հա-
ղորդուելէ առաջ արդէն շարունակ
մամուլ տակ դրուելու պատրաստ-
ուած էր, իր նոյնութեամբ՝ կը հրա-
տարակենք, հետզհետէ շարունակե-
լով զայն:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԵՐԵՎԱՆ

ԿՍԹՈՂԻԿՈՍՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՇՈՒՆԵՐԸ

Ա.

Հայերն ինչ կազմութիւն ունին
Օսմանեան պետութեան մէջ

Մեր նախարան եղբակցու-
նելով՝ նախորդ թիւերէն մէջ ը-
սինք, թէ գծուար դարմանելի
սխալ մը գործեցին այն ամեն
անոնք, որ նոր սահման անցեալի
մը մէջ, անհիմն ու հայ ժողո-
վրդեան կորուստը պատրաստող
խնդիր մը յարուցին եւ կը բացին
զայն Հայաստանի անուանով
իւր խնդրոյ պաշտպանութիւնն անոնք
որ սովորութիւն չունին խօսքի մը
սխման պաղ արեւմալ լսելով ա-
նոր եղբակցութեանն ազատելու:
Դիւրին է դուշակել որ, պիտի
զարմանան եւ թերեւ պիտի զայ-
րանան մեր այս արտայայտու-
թեան դէմ: Ինչ վրոյթ է մեզի
համար այդ կէտը, եւ գրեթէ եր-
բէք փոյթ չէ, բաւական է որ
ունինք ազատութիւն մեր կար-
ծիքն ուղիղ կամ անուղիղ յայտ-
նելու, նոյն իսկ կարծեալ թէ
ուղիղ ըլլայ այն:

Տակաւին հին անցեալի մը մէջ
թաղուած չէ այն տարին, ուր
օսմանեան կառավարութեան եւ
նոյն իսկ մահմետական ժողովր-
դեան՝ միւս հայատակ ժողովրդ-
դոց համար ունեցած համակրու-
թեան նուազիւ կը նշմարուէր ի
նպատակ հայ ժողովրդեան: Այդ-
հայ ժողովրդեան միայն որ կըը-
ցած էր իր պարկեշտութիւնն ու
համեստութիւնն եւ առ օսմանեան
գահոյս ունեցած հաւատարմու-
թիւնը դնահատել տալ՝ իր հը-
պատակած կառավարութեան:
Սակայն շատ հետաքրքրական
եւ մանաւանդ շահաւոր է գիտ-

նալ, թէ մինչեւ այս րոպէիս կը
շարունակե՞նք արդեօք այդ համա-
կրութիւն կամ համարումն առ-
հայ ժողովրդը, թէ մօտ առե-
նէ մ'ի վեր սկսած չէ՞ արդեօք
ուրիշ ձեւով մ'երեւիլ այդ հա-
մակրութիւն կամ համարում:
Դիտնալ կարեւոր կէտեր են
առնել, մանաւանդ մեր տղա-
յին պաշտօնէից այն մասին հա-
մար՝ որոց գործն ուղղակի աղ-
գին ապագային հետ վերաբը-
րութիւնն ունենալ կ'ենթադրէ:
Զարմանալի է դիտել որ մեր
ժողովուրդն, համեստաբար,
միւս Օսմ. հպատակներէ ո'րքան
աւելի մօտ է մահմետական ժո-
ղովրդեան, անոր բարոյցին ու
ընդունին, նոյնքան հեռի է զանի
լու ճանչելէ ու անոր զգացումն
ներքէ գիտնալ: Եւ ահա ճիշդ-
այս պարագայն է, որ թոյլ կու-
տայ մեզ կարծել՝ թէ մեծ սխա-
լ մը գործուեցաւ Հայաստանու
կոթիւն ինդի մը, որ լոկ Տ-Ֆ-
Կ-Կ-Կ է: Եթէ եւրոպային եւ տե-
ղական եւրոպայի թերթեր իսկ
Հայաստանու տուին անոր, ա-
նոնք իսկ սխալեցան եւ, ո' գի-
տնէ փոխութեամբ թէ յայտնա-
ղաւ պատմութեանցին մեր ժողո-
վրդեան, իւր կառավարութեան
մօտ նորա բարոյական ոյժերը
չլստեղծ:

Երբեք երկրի մը մէջ, ներքին
— քաղաքական ինքիւր մ'ուրիշ
անուն չըլլար ստանալ կ'ենէ ոչ
նոյն երկրի կառավարութեան
այդ ինքիւր նպատակակէտն եւ
զոյ գաւառին անունը: Արդ,
այդ ինքիւրն, որ սկզբաբն տեղ-
ւոյ մը վարչական բարենորոգու-
թեան խնդիր մ'է միայն, բոլոր-
ովին ծիծաղելի է զայն հայկա-
կան կոչել: Փառաւոր մը մէջ,
ուր բնակիչները թէն աղբաւ,
կրօնիւ եւ լեզուով տարբերն տե-
րող աղբէն, ներմուծուելիք
վարչային փոփոխութիւններն ու
անոնց օգուտներն ինչպաւ նոյն
կառավարութեան կը վերաբերին
սկզբումը: Այդ գաւառի բնակ-
չաց մեծ մասին Հայ եւ հետեւա-
բար Հայուն աւելի կամ նուազ
նպատակաւ ըլլալէն չը հետեւի
որ ինքիւրն հայկական ըլլալ,
Եթէ: Եւ ինքիւր լուծումէն առաջ
գայիք Օսմ. բոլորովին տարբեր
բաներ են իրարմէ:

Այս ձախող անուանակոչու-
թիւնն էր ահա, որ մէկ կողմա-
նէ գամ քան զգամ անխորժ
տպաւորութիւն մը կընէր տիրա-
պետող ցեղին ու միւս հպատակ
ժողովրդոց մօտակայ անցեալի մը
մէջ պատահած դէպքերու տը-
խուր յիշատակները կըզարթու-
ցանք անոր օրովն մէջ, միւս
կողմանէ մերազնից մէջէն թե-
րակրթից բռնէր թէ Կ-Կ-Կ-Կ-Կ
ներուն շարունակէ ապաւնի մը
երեւակայել կուտար այդ անուա-
նակոչութեան ներքեւ պահու-
տած: Սակայն երեւակայութիւնն

իրացնելու սկզբնական եւ գոյու-
նի փորձեր ըլլալ կասկածուեցան
յիշուել կամ յանդիման, հետե-
ւանք ունենալով զոր ինչ ամե-
նուս ծանօթ է այսօր:

Տանուէրը դիտեալ իր գրան
ապահովութիւնն հսկողութեան
տակ առնուէ:

Հայրն անյայտ եւ մայրն անե-
րեւոյթ, պաշտպանն անծանօթ եւ
ստորուն անգոյ մանկան նուազ
ճիշդ իս'ոյն հեղձաւ, ի նպատ-
ասոր, զինքն իր օրինաւոր որ-
դեգերը ճանչողին մի սաստիչ
ակնարկով: Եւ այս՝ եղաւ ապա-
հովիւ մանկան գոյութեան:

Ուրախայի է սակայն տեսնել
այժմ, որ կասկածները փարա-
տեցան, գոնէ նշանակելի վտանգ
մը չ'առնելու չափ, մանաւանդ
ապագային մէջ բոլորովին ան-
յայտելու յուսով:

Ինչ կըմնայ ուրեմն ըսել մեզ
իրաց այս վիճակին մէջ. — Այն
ինչ որ մեր եւ օսմանեան կառա-
վարութեան շահերը կըպահան-
ջին: Լաւ է գիտնալ որ մեր շա-
հերն անբաժանելի են եւ պիտի
մնան միշտ օսմանեան կառավա-
րութեան շահերէն, եւ փոխա-
գործաբար գուցէ: Ոչ նուազ
լաւ եւ օգտակար է նաեւ գիտնալ
որ Հայ տարրն այն ըլլալու վի-
ճակուած է օսմանեան Պետու-
թեան մէջ՝ ինչ որ է բուն տիրա-
պետող տարրը: Այսինքն մեր
ձախող կատարեալ հաւատարու-
թիւն մ'ազգայնութեան (Հայաս-
տան) տեսակետով, երկրին մի եւ
նոյն որդիութեան՝ հայրենեայ
տեսակետով: Իմարում մը՝ առ որ
ձգտելն ու անոր իրականացումն
կ'ըլլու հանկու համազգայն
ապահովութիւն է Հայուն գոյութիւնն
ու օսմանեան տերութեան զօ-
րութեան ամրապնդումը:

Կըսուի թէ ապագան, ամեն
բանի մէջ, միշտ մոռն է, թէ
գայիք անորը Նախահայաստան-
ութեան մը կամայ գերին է, թէ
վերջապէս ապագային համար
եղած նախադրեալութիւնը, մի-
միայն փորձառութեամբ եղած
հետախուզութեան մ'աւելի կամ
նուազ ճշգրտութեամբ հետեւելիք
իրողութիւնները կրնան ըլլալ,
միւս կողմանէ կըսուի նաեւ թէ,
անցեալին իրատու յերկային մէջ
ունեցած ընթացիկ ապագային
պատրաստութիւնն է, թէ ա-
ռանց նախախնամական միջամե-
տութեան մը, ապագան՝ լաւ
կամ յոռի՝ պատրաստել մեր
ձեռքն է: Թող այս երկու հա-
կարան վարդապետութիւնք բռն
ինչ որ կուզեն: Առանց որ եւ է
իմաստասիրութեան մը ծայրա-
յանք այդ երկու վարդապետու-
թեանց չափաւորեալ սկզբունք-
ներն առնելով ի մի ձուլել եւ ը-
սել թէ, մենք մէկ կողմանէ
թողով որ Նախահայաստանութիւնն
իր գործը տեսնէ, միւս կողմանէ

փորձառութեան միայն յերկու՝ ա-
ւելի կամ նուազ ճշգրտութեամբ
հետեւելիք իրողութիւններ հե-
ռատեանք մեր ժողովրդեան հա-
մար:

Ուրիշ պայմաններ եւ հարկա-
ւոր են այդ հետախուզութիւնն
ամբողջ կամ անթերի կարենալ
ընելու համար: Պէտք է կատա-
րեալ գաղափար ունենալ օսման-
եան Պետութեան հպատակ միւս
տարերը ներկայ եւ, մասամբ եւս,
ապագայ կազմութեան նկատմամբ:

Բանաւոր է դիտել, որ երբ
մի առ մի քննելու օսմանեան
տերութեան հպատակ զանազան
ժողովրդոց վիճակը, ժողովուրդ-
որք կըբաղկանան գլխաւորապէս
երեք հիմամբ միակրօն բայց
վերբերաբար այլադաւան, եւ եր-
կու բացարձակապէս այլալոյն
ազգերէ, պիտի տեսնենք որ
մենք՝ որ առաջին երեքն ենք
բոլորն ենք՝ հակառակ մեր կրօնի
հիման նոյնութեան եւ լոկ դա-
ւանանքի տարբերութեան, կե-
նակցութեամբ աւելի հեռի ենք
մեր հիմամբ միակրօն ժողովուրդ-
ներէն, քան վերջին երկուքն
մէկէն այսինքն մահմետականէն,
որմէ կը տարբերենք հիմնական
կրօնիւ եւ կրօնանիք բարոյք ու
կենցաղավարութեամբ:

Այս ճշմարտութիւնն անհերք-
բելի ըլլալ կըթուի, երբ յիշենք
մեր ամենէ հին անցեալն իսկ,
մեր անկախ հողերն ու այն ցե-
ղերն որոց հետ դարերով դրու-
ցութիւն ըրէր եւ կենակցէր ենք,
մէկ խօսքով մեր աւանդութիւն-
ներն ու հին ու նոր պատմու-
թիւնը: Մինչդեռ այժմու օս-
մանեան հպատակ միւս ժողո-
վուրդները բոլորովին տարբեր
անցեալներ, տարբեր աւանդու-
թիւններ, տարբեր դրացիներ եւ
վերջապէս տարբեր պատմութիւն-
ներ ունեցած են:

Աւանդութեանց եւ բարոյք ու
սովորութեանց ազդեցութիւնն
ոչ նուազ, եւ թերեւ աւելի զօ-
րութիւն մ'ունի մարդոց վրայ՝
կրօնից եւ դաւանութեանց աղ-
ղեցութեանէն: Այդ աղղեցու-
թիւնն ահա որքան կըգործաւորոյ
գործութիւն մը կ'ենթադրէ օս-
մանեան միւս հպատակաց հա-
մար, նոյնքան եւ աւելի կըգոր-
ծանայ գործութիւն մ'ունի մեր
վրայ դէպի օսմանեան կառավա-
րութիւն եւ դէպի տիրող ցեղ
այն պետութեան: Զարմանալի
չէ որ, զանազան ձգտումներ
տածեն այնպիսի տարբեր, որք
մէկ կողմանէ նախնի անցեալը մը
ամբողջ թէրթիւններով եւ միւս
կողմանէ միակրօնութեամբ եւ
միադաւանութեամբ կազմակեր-
պեալ տարերց յենած են:

Զատնք ընդհանրելով, կ'ըբա-
նենք որ Հայն Օսմանեան տէրու-
թեան էական ժողովուրդը կամ
տիրող ցեղին հետ միատարրու-
թիւնը պատրաստելու միակ տա-
րն է:

Պէտք չէ խորհել Բեռլինի քառէն : Կրօնից վտանգ չ'են : Թաղերէն ալ Թոյլտուութիւնն ու խղճի ազատութիւնն որք այժմէն կը թաղաւորեն , ամենամեծ յոյսեր կուտան որ մերձակայ ապագայի մը մէջ՝ բոլորովին պիտի դանազանեն Եւրոպայի կը բռնեն : Ազգայնութիւնը միեւնոյն երկրին ու հայրենեաց զաւակ , միեւնոյն տարրերէն կազմակերպեալ կառավարութեան հաւասար հպատակութիւն և սորա առջև հաւասար իրաւունք ու հաւասար պարտք ունենալ կ'ենթադրէ :

Արդ , այս հաստատման եզրակացութիւնը , թէ օսմանեան կառավարութիւնն ինչ շահ կրնայ ունենալ մեր կաթողիկոսական ընտրութեան մէջ , պիտի խօսինք ուրիշ անգամ այն հաստատումով՝ որ պիտի քննենք բոլոր կարի , թէ Հայք ինչ կացութիւն կրնան ունենալ Ռուսիոյ պետութեան մէջ :

ՆԵՐՔԻՆ

Արդարութեան գործոց նորընտիր նախարար Հասան Ֆէհրի բաշա , հրամաններ տուած է փոխով լրացուցելու համար մայրաքաղաքի պատժական դատարան մօտ առկա միացած դատերը :

Տաճիկ լրագիրք կ'իմացունեն թէ վերջին օրերու մէջ 100էն աւելի դատավճիռներ արուած են պատժական զանազան գործոց վերաբերութեամբ , որոց համար ամբաստանեալ անձինք օրերով առժամեայ այսինքն առանց դատապարտութեան բանտերու մէջ կը պահուին :

Թուէ կըսէ թէ Մալիս Կին Ապրիլ ամսոյ ամառի շրջանը վճարուէր են Արդարութեան գործոց նախարարութեան բոլոր պաշտօնէից :

Արտաքին գործոց պաշտօնատան մէջ մասնաւոր դիւան մ'են կազմուած է , այն պաշտօնատան տաճիկերէն թղթակցութեանց դիւանի անգամ , Համիդ Պէյի Նախագահութեան ներքե : Այս դիւանի կազմութեան նաւատակն է դիրտացունել այն կանոնադրութիւնն որ ընդունուած է պարսկ միացած պաշտօններու այս կամ այն պաշտօնէին յանձնուելուն համար :

Ճերմեի Հափաթի կըսէ թէ , Սէլանիկի նախարար կուտակալ Հասան Բաշան փայտի դառը , որ մինչև դատաւարական եղանակաց լրմանն յետաձգուած էր , առաջիկայ չորեքշաբթի (այսօր) պիտի տեսնուի զանազան նիստով Պետական խորհրդոյ պատժադատ ճիւղին առջև , որ դատաստան պիտի կազմէ Բաշաբէր Սահիպ Պէյի նախագահութեամբ : Բոլոր ամբաստանեալ անձամբ ներկայ պիտի դուռնին :

Մայրաքաղաքին Բաղաբապետական խորհրդը մասնաւոր բժիշկներու ձեռքով պատուաւ տել կուտայ ձերբարք բոլոր աքաղաքները : Այս վերջին օրերու մէջ պատուատուած տղոց թիւն 338ի կը հասնի , ըստ տեղեկագրաց յիշեալ առ յիշեալ խորհուրդն :

Հազիբաթի կը ծանուցանէ թէ արշաւաց տարախոսիկ հիւան

դութիւն մը ծագած է Էրէնքէօյի և չընկալից մէջ :

Վեհափառ յոյն լրագիրն իր հրատարակումը դադարեցուց , կըսեն Պոլսոյ լրագիրք , տէր—տնօրէն պարոն սէնիօի հիւանդութեան պատճառաւ :

Նախարարաց խորհրդոյ որոշմամբ , Բարձրագոյն Դրան մէջ մասնաւոր յանձնաժողով մը կազմուած է , առևտրական դաշնագրութեանց վերաբերութիւն ունեցող բոլոր գործոց վրայ խորհրդակցելու համար : Յանձնաժողովոյ կենտրոնացած է Յովհաննէս Չամիչ և Ֆէհրի , որ նախագահ է Հայուէկալ—Ատենի Մեդաքանին են Մարտատանց խորհրդական Պերթում , արտաքին գործոց նախարարութեան մէջ իրաւաբան—խորհրդական Կէօշէր և Գարրիէլ նորատունկեան է : Ֆէհրիներն և Առևտրական պաշտօնէութեան մէջէն Մահմուտ Պէյ :

Մայրաքաղաքին բոլոր թերթերը բերկրութեամբ կը ծանուցանեն թէ , հայազգի անուանի բժիշկ տօքթօր Փէշտիմալեան , վերջերս վերադառնալ Սուլթանի ներկայանալու և միտնել ճաշելու պատուին արժանացած է : Նորին Վեհափառութիւնը մասնաւոր համակրութիւն մը ցոյց տալ բարեհաճէր է տօքթօր Փէշտիմալեանի , և զայս ապացուցէր է ընծայելով անոր անդամանդակուած ընդատուի մը և կարգելով զինքն երկրորդ բժշկական կամ խորհրդատու բժիշկ պաշտան :

ԲԱՆԱԲԱԿԱՆ

ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՐԴ

Անցեալ ուրբաթ օր , Անգլիոյ Հասարակաց խորհրդարանին մէջ Պ. Կլաքսթօն Սիր Պարթլըյի պատասխանելով ըստ թէ , Գետախորհրդոյ դուռնեղբիւ վայրը տակաւին վերջնապէս որոշուած չէ , բայց Դեպքայն խորհրդին հիմը կարգադրուած է հրաւիրագրոյն պարունակութեամբ : Պակոյն բնականաբար Տէրութեանց զատուութեան պիտի ձգուի՝ հրաւիրագրին յիշատակածէն ուրիշ որ և խնդրոյ մը վրայ վիճել : Թէպէտև ուրիշ խնդրոյ մը ներմուծումը՝ նոր Դեպքայն խորհրդոյ դուռնուածն ըսել է , բայց Պ. Կլաքսթօն չկրնար ըսել թէ երբ Տէրութեանց ներկայացուցիչը դուռնարին , օրէն խնդիր մը չպիտի յարուցանեն , խնդիրն որ կարենայ միջադէպին շահ մը ունենալ :

Ամսոյն Յին , Լորտ Սալիդալի լորտերու խորհրդարանին մէջ բանախօսութիւն մ'ըրաւ , ուր խափաքնադատեց Լորտ Կրանփիլի պատասխանը՝ զոր տըւած էր Դեպքայն խորհրդոյ համար եղած հարցումներու մը , Այդ բանախօսութեան մէջ հետեւեալ ուղարկութեան արժանի հատուածը կ'երևի .

« Դեպքայն խորհրդին անհամար դժուարութիւններով պաշարուած է : Մինչ վեհաժողովուրդ տէրութիւններու խորհուրդ հարցունելու պարտաւորութեան վրայ կը խօսի , երբ կըցանկացուի միջադէպին իրաւունքը բարեփոխել , չեմ գիտեր թէ այնպէս կ'իմանայ արդեօք , թէ այս տեսականութիւնը պէտք է խտրուի

գործադրուի , Պիտի գործադրել տայ արդեօք իր ամողովութեամբ Տաճկաստանի նկատմամբ ևս (Բեյ Էրէ , Բեյ Էրէ) : Տաճկաստան , ոչ միայն մեծ տէրութեանց մէջ է , որ Բարիկ դաշնագրով թեմաք Եւրոպայի Խորհրդոց մէջ ընդունուեցաւ , այլ նաև մասնաւոր իրաւունք մ'ունի երկրպագական խնդրոյ մասին խօսքը մտիկ քննել տալու : Տաճկաստան հարկաւոր է հրաւիր կարգալ Տաճկաստանի գանձարկին խնդրոյ վերաբերութեամբ : Եթէ կուզէք արտօնութիւն խնդրել երկրպագական գանձարկ բարենորոգութեան շաղկիւն հարկելու , առաջին գործն է փոխառութիւն մը կ'ընել : Արդ այն փոխանորդայծմալ Խրախիկն դաճակալեալ կապէս կ'արդիւն անոր փոխառութիւն մը կ'ընել : Եթէ կըզարտաք օրիշ տէրութիւններու խորհուրդ հարցունել , պէտք է որ այդ տէրութեանց առաջինը Տաճկաստանն ըլլայ :

Պարտաւորութիւնը ճշտութեամբ Արմանիոյ առաջին գանձարկն ըրաղին է , դիտել կը կարծի տալ , ապրիլի րէ այն նպատակները զորս Գաղղիոյ կառավարութիւնը կըտածէ երկրպագական գանձարկ վերակազմութեան նկատմամբ : Գաղղիական կառավարութիւնը , կըսէ յիշեալ թերթը , չկրնար ընդգրկմանայ Անգլիոյ ծրագրին , միայնեալ պարտուց վերաբերութեամբ եղած կամ ըլլալիք առաջարկութեանց համար : Բայց միւս կողմանէ , Գաղղիական կառավարութիւնն հակամեծ չըլծուի , քաղաքական պատճառներու համար , Անգլիոյ և Բալխանիոյ ընդունելու երկրպագական պետական փոխառութեան մը համար : Առկէ գտա Թուրքիոյ դրամատունները , որք արդէն երկրպագական կառավարութեան մեծագոյն փոխառութիւնները բրած են Անգլիոյ և Բալխանիոյ ընդունելու , արամագրին չեն երևիր ընդունելի ծրագրին անոր հաստատուն հիման մը վրայ դրուելէն առաջ :

ԳԱՂԴԱՍ Ի ՄԱՐԿ

Թիւթիկի գործակալութիւնն ամսոյ 4 թուականաւ հետեւեալ հեռագրեր կը հաղորդէ Թանիքին՝ առ անգլիացի լրագիրս . — Թիւթիկայի և Մարքի միջև յարաբերութիւնը , որք վերջերս խիտ ջրտացած էին երբ Մարքի Սուլթանը մերժեց պաշտօնական ընել Ռազանի կառավարչ , զոր խնդրած էր Գաղղիոյ այդ Խորհրդութիւնը կըսեն բոլորովին ընդհատեցան : Գաղղիական դրոշակն , որ այս առաւօտ կանուխ դեսպանատան վրայ պարգուած էր , ժամը 10ին վար առնուեցաւ :

Իսկ Տէր լրագիրն անտողդ կը հանէ այս լուրը , հետեւեալ պարբերութեամբ . — Մարքի հետ մեր ունեցած յարաբերութիւնը ամեն կէտի մէջ գոհացուցիչ են : Պ. Օրդէկա Մարքի մեր ներկայացուցիչը , գիտցած ըստի կացութիւնն մը ստեղծել Թիւթիկայի համար այն երկրին մէջ՝ ուր զմիմիմ կընդհանրէ , և իր ամեն պահանջներն ընդունուեցան : Մարքի կառավարութեան հետ ունեցած մեր յարաբերութիւնը այնքան լաւ են որ , մեր դեսպանը կըցան արձակուրդ տանալ : Երէկ ծանուցիւք անոր Բարիկ հասնելը , և եթէ գաղղիական գործակալները կըզարտէ իր ապարանքն ,

պատճառէ դեսպանին բացակայութիւնն է :

ԲԻՐԱԿԱՆԱՆ

Հոռվի Մեքէլեալ Լըսէ , թէ ըստի մ'որէ ի վեր երկրորդ ծանուցալիր մ'ուղղուած է Պալին ներկայացուցիչներուն ժողովին կարգինային կողմանէ , Հաւատոյ Մաւալման Խորհրդակցութեան մասին :

Վատիկան կը պնդէ թէ , Ս. Աթոռը բռնաբարուած է իր իրաւանց մէջ , և այս հաստատուած է ամբողջ աշխարհի եպիսկոպոսութեան կողմանէ , իր զորապետներուն և ուղերձներուն մէջ :

Յիշեալ ծանուցալիրը բացարձակապէս կը մերժէ որ և է տօրինութեան կամ կարգադրութիւն որ կրնայ փոխ քերել Բարոկանտայի արժանապատուութեան և շահերուն :

Կարգինալ ժողովին կը ծանուցանէ վերջապէս , թէ չկրնար յարմարել այն մտադրութեանց և նպատակաց հետ , զոր պարոն Մանիին վերջերս յայտնեց և րեափոխանական ժողովն արտասանած մէկ ատենախօսութեան մէջ :

ՁԱՆ Ա. ՁԱՆ Գ

Լէ Նուէլ կը ծանուցանէ թէ , Ռուս կառավարութիւնն որոշած է երկրպագական չինել Սիւպերիոյ մէջ : Եթե թիւթիկայի աշխատութիւնը պիտի յանձնուի կառավարութեան յանձնառուի մը : Որոշուած գինը վճարուելէ ետեւ , կառավարութիւնն երբեք յաւելուած անկան վարչ չը պիտի տայ յանձնառուին : Այսպիսով թեանց ընդհատեցնելու կատարեալ ազատութիւն մը պիտի տայ ընդունած գումարն ուղարկել պէս զործածելու մասին :

Աւստրիոյ Տէմոյրալ—Սոխալիսները (Ժողովրդական իշխանութիւնն ուղղ ընկերակարանք) յայտարարութիւն մը հրատարակած են Պառաքելի մէջ , որ ձերբակալուած է ոստիկանութեան կողմանէ , սակայն Վիեննայի մէջ ընդհանրապէս թողաւուութիւն եղած է նոյնին հրատարակութեան : Այդ յայտարարութեան հեղինակները կ'հաւատեն թէ , ընկերակարանութիւնն ամբողջաւ զորդանալու վրայ է : Կը խրատեն իրենց զաւթական համադէնները որ ծածուկ իրաւունքներէ ետ կենան և յայտնի պաշտպաններ իրենց դատը՝ Սոխալիսի կառավարութեան կողմանէ յանկայեալ բարենորոգութեանց համար , այսինքն օրական աշխատութեանց ժամերու ղեղըւմ և ընդհանուր ձայն ընտրողութեան : Յայտարարութիւնն իր մօտալուտ կը ներկայէ Հիւսիսային Ամերիկայի մէջ անտեսական տաղանայ մը , որ վերջ պիտի տայ եւրոպական գաղթականութեան :

Բեքէլեալ Լըսէ մը կըսէ թէ , Թուրքիստանի վարչային վերակազմութեան օրինական ծրագիր մը պատրաստելու պաշտօն ունեցող յանձնաժողովն իր աշխատութիւնները լրացուց : Յանձնաժողովը կ'առաջարկէ երկու կառավարութիւն հաստատել որոց կեդրոնն ըլլան Թալիսան և Մարկիւն վերաբար :

Լեւիշ Լըսէ մը կը հաւատաւ թէ , Գաղղիոյ ինական կառավարութիւնը կ'արդիւնն ունենայ պատան ժամանականներուն տեսուող ընել արեւելեան Թուրքիստանը : քաղաքացի մէջ , ի բաց առեալ Գաղղիոյ քաղաքը , և այս հակառակ ի գործ դրուող Ռուս—Չին դաշնագրութեան կը նախատեսուի որ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը յայցեր պիտի ընէ այս մասին :

Սպանիոյ լրագիրք ծանուցանելով թէ , Թանիկի մօտ Եպիսկոպոսի մը սպանուել է , կը խնդրեն Սպանիոյ կառավարութեան որ Մարքի (Ֆէս) կառավարութեան ազդարարութիւններ ընէ տեղւոյն Սպանիացի հրապարակաց պաշտպանութեան համար :

Արմանիական գաղթականական ընկերութիւնն իւր ընդհանուր ժողովը գումարեց վերջերս Պերլինի մէջ : Ընկերութեան նախագահ Հոնէկուէն իշխանը պնդեց ըսելով , թէ Սիւրիոյ մէջ հաստատուող Գերմանացիները բացկալ Թանիկի (տաճարական) կաշուած , կրօնական ու խոր պէտք է քաջալիքել իւր օղակալութեանը համար :

Գերմանիոյ մէջ մէկ կտուք մը գտնուելու ստուգիչ շատ հազուադէպ իրողութիւն մ'է , առաւել և գիտնալու արժանի : Ծորանութի (Գաղղիոյ) հնագիտական Ընկերութեան նախագահ Պ. Եոսվէ բրած է այդ դիտար , Հիւսիսային Թիւթիկայի ընկերական համար հոգը փորած ատեն Պ. Եոսվէ դերեզմանի մը մէջ կը գտնէ Կրուսայի կառք մը , կատարեալապէս պահպանուած : Կ'երևի թէ , այս առաջին անգամն է որ իւր մասօրինակ դիւան մը կըլլայ :

Անգլիոյ հատարակաց խորհրդարանին մէջ Պ. Պրօսպերիթի կողմանէ եղած այն առաջարկութիւնը , որով արտօնութիւն կը խնդրէ որ կրնա մեռած այր մը կարենայ իւր քնին , այսինքն մեռած կնոջը քոյրն առնել , ընդունուեցաւ 238 ձայնով : Ընդդէմ 127 ձայնի :

Ուրեմն Անգլիացիք պտտո են պարտահաւ իրենց ընկերականութեան առնուլ :

Եւրոպայի Գաղղիոյ մէջ մարդ մը մինչև 108 տարեկան տարեկ է : Այս մարդը կը կաշուէր իրատէ Լորանսոն , շատ սուր յիշողութիւն մ'ունէր և մինչև մահուան օրը կատարեալապէս կըզոյսնէր իր իմացական կարողութիւնները : Կը սիրէր Պիտաքորիսեան պատերազմներու պատմութիւններն ընել , ուր ինքն ալ երկար տառն ծառայէր : Մինչև հարկ իր տարեկան հասակին ամուրի կը մնայ , բայց իսկայն հաճոյք մը կըզգայ ընտանիք մը կազմելու , ուստի երիտաւարը վարժուհի մը կ'առաջարկէ կին ըլլալ իրեն , այս վերջինը կը հաւանի իւր երիտաւարութիւնը ղոհել և հետեւի մեր ձերագոյնն : Որդի մը կը ծնի ասանց մէ , բայց Հաղորդ :

